

Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ՇՄԻԴՏ, ՖԵՐԴԻՆԱՆԴ.—Ռէյնեկէ աղււսը, գերմաներէնից թարգմանեց Փիլիպպոս Վարդանեան: Երես, տառ № 12 Թիֆլիս, Յ.
Մարտիրոսեանի տպարան: 194 երես, գինն է 60 կ.:

«Ռէյնեկէ աղււսը» մի հեղինակի գործ է. նրա վրայ միջին դարերի ընթացքում աշխատել են մի շարք անգլատ գրողներ. չալտէի է միայն չորսի անունը, որոնք գրել են գրքի հազիւ մի քառորդը: Միջին դարերում կազմած այս գիրքը չնույն պատմեցին զանազան հեղինակներ, օրին. Գեթթէն փոխադրեց նրան հեկ զամետրների. պատմողներից մէկն է և Ֆ. Շմիդտը. Իսկական միջնադարեան «Ռէյնեկէի» բովանդակութիւնը հետեւեալն է. Ռէյնեկէն աղքատացած ասպետ էր. նա ապրում էր կիսաւեր Մալպերտուս ամրոցում իւր ամուսնով ու որդիներանցով. նրա ընտանիքը չաճախ ստիպւած էր սովատանջ լինել. գիտե՞նալով պերճախօսութեան ուժը, Ռէյնեկէն փորձեց խօսքով հանգստացնել իւր քաղցած որդուն, բայց այս վերջինը չ'ենթարկւեց նրա պերճախօսութեանը, ալ ընդհակառակը սկսեց աւելի բարձր աղաղակել և հաճաղէսին մնում

է միայն մի բան, կամ գողութեամբ, կամ խորամանկութեամբ ձեռք բերել այն, ինչի նա պահանջ ունի: Այդպիսով աղււսը ընդհարումն ունեցաւ գալլի հետ և հէնց սկզբից մի չուսահատ կռիւ սկսեց նրա հետ: Գալլը գանգատուում է թագաւորին որի դէրը կատարում է առիւծը. նկարագրելով Ռէյնեկէի ճանապարհորդութիւնը դէպի արքայի պալատը, հեղինակը օգտուում է հանգամանքից՝ ներկայացնելով առիւծի պալատական կեանքի նկարագիրը. ամենից առաջ նա կանգ է առնում ի հարկէ արքայի վրայ, որը նշանաւոր է իւր վսեմ վիմարութիւնով. թէև սա օչինչ չի անում, բայց չամառ կերպով մաքառում է իւր արքայական իրաւունքների համար և զաճութեամբ լսում է պալատականների կեղծաւորութիւնները: Արքայի գլխաւոր խորհրդականը արջն է, ծանրաշարժ, բայց սարսափելի որկրամուլ մի արարած, որը ոչ այնքան մտածում է տէրու-

թեան գործերի որքան ալն բանի մասին, թէ ինչ կերպով բաւարարութիւն առ իւր ստամոքսին: Արքայի սիրելին, ամբողջ պալատի խղիւղը, պճնասէր, գեղեցիկ, պալատականի խակական տիպարը՝ լէօպարդն է (ընծառիւծը) որը թող է տալիս արքային հաճուանալ իր կնոջը: Գլխաւոր դատաւորը եղջերուն է, որը իւր պողբերից ղէնը ոչինչ չի տեսնում, բայց զրա յիշարէն նրա կազմածը բոլորին հիացնում է իւր լրջութեամբ. հէնց այդ բանի շնորհիւ է, որ նա դատաւոր է դառել: Իստու գալիս է պալատական հոռտորը՝ էշը, որը նշանաւոր է իւր խլացնող պերճախօսութիւնով. նա ալնալիսի բարձր ձալնով է քարոզում, որ նրա քարոզը լսելի է լինում մի ամբողջ մղոն տարածութեան վրայ: Ապալէս ուրեմն արքայի պալատը գալիս են աղէսը ու գալլը և խնդրում են, որ իրանց դատէ: Քլխին ծանրութիւն չտալու համար, ալնքան դիմում է միջին դարերում ընդունւած դատաստանական մենամարտութեանը. ասպարէզ են գուրս գալիս. գալլի մազերը կատաղութիւնից բիզ բիզ են կանգնել, նրա աչքերը լցած են արիւնով, իսկ աղէսը իւր մօրաքրոջ խորհրդով ածիւլէր մորթու մազերը և իւղով օծել մարմինը: Աղէսը խոլ է տալիս գալլից, ցանկանալով նրան չոգնեցնել, աչքերին թող է փչում և երբ գալլը չոգնած ու կուրացած աւազից ու փոշուց վալր է ընկնում, աղէսը չարձակում է նրա վրայ և սկսում է կրծել. բայց նա ալնքան գրաւում է իւր դիրով, որ չի կարողանում լստ փախչել:

Գալլը բռնում է նրա թաթից և ալնալէս ուժեղ կծում է, որ աղէսը ուշաթափւում է. սա չաղթած է և արքան նրան մահաւն է դատապարտում, վարդապետները միջամտում են և նա ներումն է ստանում ալն պալմանով, որ իւր մեղքերը ապաշխարելու համար վաճառեց մանի. աղէսը սկսում է ճգնել և ինչպէս ջերմառանդութեամբ է ճգնում! Բայց այս բոլորը երկար չէ տեսնում: Ալնքի բազում շրջող չաղ հաւերը դալթակղեցնում են նրան և նա ուտում է մէկին: Աղէսը դատի ենթարկւեց, արտաքսւեց վաճառից և անիծւեց եկեղեցուց. վերագառնալով տուն, նա սարսափ է բերում միւս կենդանիներին: Արքան պաշարում է աղուէսի ամրոցը. պաշարումը տևում է մի ամբողջ տարի. չոգնած երկար պաշարումից, առիւծը ընգոռնում է խաղաղութեան պալմանները, ընդունում է աղէսին իւր ծառալութեան մէջ և իրա ամենամօտիկ անձն է դարձնում. իսկ վարիաններից մէկում Ռէյնեկէն նոյն իսկ թագաժառանգ է նշանակում և ժամանակով ալնալիսի իմաստուն թագաւոր է լինում, որ նոյն իսկ Հռոմի պապը հրաւիրում է իւր մօտ՝ նրանից իմաստութիւն սովորելու համար:

Մենք չենք բերում միւս էպիգոդները, դա կ'երկարացնէր մեր գրախօսութիւնը. բաւականանում ենք որոշելով, գրքի ընդհանուր նշանակութիւնը. Ռէյնեկէն աղէսը մի դառն սատիրա է ուղղած ֆէօդալիզմի, ասպետութեան, և հոգևորականութեան անառակութեան դէմ: Բոլորը, ինչի առաջ խոնարհւում էր միջ-

Նադարեան հասարակութիւնը, ալն է արքայական իշխանութիւնը, Նորա արդարադատութիւնը, ասպետութիւնը, մենամարտութիւնով դատ վճռելը, կուսակրօնների կարգերը, վերջապէս Նոյն ինքը Հռոմի պապը, ծաղրի ու խալտառակութեան է ևն-
թարկուում, Բոլորին չաղթում է խորամանկութիւնը և քաղաքագիտութիւնը, որը մարմնացած է աղւէսի մէջ, «Ռէլիգիէ Ազէսը» վկայում է ֆէօդալական աշխարհի լուծւելը իւր իրաւունքներով ու հիմնարկութիւններով և Նոր բուրժուազիայի դարեւորջանի սկսւելը, երբ արքայական իշխանութեան և քաղաքային համայնքների միացած ճիգերով՝ հարւած հասցրեց միջնադարեան ֆէօդալիզմին, մի հարւած, որից չետոյ չաւլ ևս չը կարողացաւ ոտի կանգնել» (Средневежковая литература, лекция профессора Н. И. Сторощенко).
Շմիդտը, ինչպէս վերև նկատեցի,

պատմում է Նոյն Նիւթի մասին և Նա պատմում է հետաքրքիր կերպով, բայց Նրա պատմութիւնը ազատ չէ մի քանի նշանաւոր պակասութիւններից. ամենից առաջ Շմիդտի «Ռէլիգիէի» մէջ բացակայում են միջնադարեան տիպերից շատերը, ալստեղ խօսք չը կա՝ ոչ Հռոմի պապի, միջնադարեան ալս նշանաւոր հիմնարկութեան մասին, ոչ հոգևորականների, ոչ ասպետութեան մասին և երկրորդ՝ միւս տիպերը, եթէ դուրս էլ են բերւած, ալդ արւած է ալնքան անորոշ ու թույլ գծերով, որ անկարելի է գուշակել, թէ որ դառակարգի ներկայացուցիչ է ալս կամ ալն կենդանին։ Միակը, որ պարզ է դուրս բերւած, դա միջնադարեան արդարադատութիւնն է, երբ չաղթող էր հանդիսանում ոչ թէ արդարը, ալլ ճարպիկը։

B.

«ԹՈՄՐՍ ԲՈՅՈՐԻՍ, (ճշգրիտ անցք), Թարգմանութիւն Մոսկւա, տպ. Բարխուդարեանի, 1891 թ., 32 էրես, գինն է 3 կոպ.։

Գործողութիւնը կատարւում էր չունական կղզիներից մէկի վերալ, տաճկական իշխանութեան օրերում, մեզանից մօտ 500 տարի առաջ, Խաւար ու բարբարոս ժամանակ էր. ոչ ոք ապահով չէր իւր կեանքի, պատւի ու կալքի համար. վիրատուրում էին մարդու ամենասրբազան զգացմունքները, իսկ ժողովուրդը լուռութեամբ ու համբերութեամբ տա-

նում էր ալդ բոլորը. ոչ ոք չէր վրճուում թոթափել իրանց վրա ծանրացած լուծը. հարկաւոր էր մի համարձակ, ուժեղ կամքի և սուրբ զգացմունքների տէր մարդ և ալգայիսին առաջ եկաւ. դա Թոմաս Բոցարիան էր. Նա Նոյնպէս ալրւած ու զաղւած էր տաճիկներից. տաճիկ հարկահանները խաւարեցրին Նորա սիրելի մօր վերջին ըրպէները, տաճիկ զաղին